ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«24» Սեպտեմբերի 2021թ. N ՄՈ/400 -2021

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 7-Ի N ՄՈ/140-2021 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով «Մայիսյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի N 131 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին N ՄՈ/140-2021 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված N 45 հավելվածի 13-րդ կետում «Հովհաննիսյան Արփինե» բառերը փոխարինել «Պապյան Նունե» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հարգանքով՝ *Հ.Մաթևոսյան*

24.09.2021

VERIFIED OCSP 24.09.2021 09:29:45 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230